ՀԵՌՈՒՍՏԱՏԵՍՈՒԹՅԱՆ ԵՎ ՌԱԴԻՈՅԻ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ

ՈՐՈՇՈՒՄ

9 հոկտեմբերի 2026 թվականի թիվ 128-Ա

ք. Երևան

ԼՍՈՂԱԿԱՆ ԾՐԱԳՐԻ ՀԱՃԱԽԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՕԳՏԱԳՈՐԾՄԱՆ ԼԻՑԵՆԶԱՎՈՐՄԱՆ ՄԱՐԶԱՅԻՆ ՍՓՌՄԱՆ ՄՐՑՈՒՅԹ ՀԱՅՏԱՐԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեսալսողական մեդիայի մասին» օրենքի 32-րդ հոդվածի 1-ին մասի 3-րդ կետի, 44-րդ հոդվածի 1-ին, 5-րդ մասերի, 60-րդ հոդվածի 14-րդ մասի, Հեռուստատեսության և ռադիոյի հանձնաժողովի 2020 թվականի սեպտեմբերի 8-ի «Հանրային մուլտիպլեքսում սլոթի օգտագործման լիցենզավորման մրցույթի անցկացման կարգը և լիցենզիայի ձևը հաստատելու մասին» թիվ 94-Ն որոշմամբ հաստատված կարգի դրույթներով՝ Հեռուստատեսության և ռադիոյի հանձնաժողովը ***որոշում է***.

1. 2026 թվականի հոկտեմբերի 9-ին հայտարարել լսողական ծրագրի հաճախականության օգտագործման լիցենզավորման մարզային՝ ՀՀ Արարատի մարզի տարածքում սփռման մրցույթ:
2. Հաստատել լսողական ծրագրի հաճախականության օգտագործման լիցենզավորման մարզային սփռման մրցույթի մասին տեղեկատվությունը՝ համաձայն Հավելվածի:
3. Հրապարակել մրցույթի մասին տեղեկատվությունը Հայաստանի Հանրապետության հրապարակային ծանուցումների www.azdarar.am և Հեռուստատեսության և ռադիոյի հանձնաժողովի www.tvradio.am պաշտոնական ինտերնետային կայքերում:
4. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում պատշաճ իրազեկելու օրվան հաջորդող օրվանից:

ՀԵՌՈՒՍՏԱՏԵՍՈՒԹՅԱՆ ԵՎ ՌԱԴԻՈՅԻ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ՆԱԽԱԳԱՀ **Տ. ՀԱԿՈԲՅԱՆ**

2026թ. հոկտեմբերի 9
ք. Երևան

Հավելված
Հեռուստատեսության և ռադիոյի հանձնաժողովի
2026 թվականի հոկտեմբերի 9-ի թիվ 128-Ա որոշման

ՏԵՂԵԿԱՏՎՈՒԹՅՈՒՆ
Լսողական ծրագրի հաճախականության օգտագործման լիցենզավորման մարզային սփռման մրցույթի մասին

1. Լիցենզավորման ենթակա գործունեության տեսակը՝ լսողական ծրագրի հաճախականության օգտագործում:
2. Սփռման տարածքը և հաճախականությունները՝ ՀՀ Արարատի մարզ, գ. Զովաշեն՝ 94.0 ՄՀց, ք. Վեդի՝ 94.7 ՄՀց և ք. Արտաշատ՝ 94.3 ՄՀց:
3. Մրցույթին մասնակցելու համար ներկայացվում է՝
   1) հայտ (ձևը կցվում է),
   2) փաստաթուղթ՝ լսողական մեդիածառայություն մատուցողի նախանշված նպատակների իրագործման հիմնական ուղղությունների և միջոցառումների ընդհանրական նկարագրի վերաբերյալ՝ անդրադառնալով հետևյալ չափանիշներին՝
   - սեփական արտադրության հաղորդումներին,
   - հայերեն հաղորդումներին,
   - բազմակարծությանը,
   - հայտատուի տեխնիկական և ֆինանսական հնարավորություններին,
   - աշխատակազմի մասնագիտական պատրաստվածությանը,
   - ազգային, համամարդկային, հոգևոր, մշակութային մնայուն արժեքների ճանաչողությանն ու ամրապնդմանն ուղղված հաղորդումներին,
   - գործող լիցենզավորված տեսալսողական մեդիածառայություն մատուցողների դեպքում՝ գործունեության իրականացման ընթացքում լիցենզավորման հայտով ստանձնած պարտավորություններին համապատասխանությանը,

   3) ֆինանսական աղբյուրները հիմնավորող փաստաթղթեր,
   4) տվյալներ օգտագործվելիք տեխնիկական միջոցների վերաբերյալ,
   5) տեղեկություններ աշխատակազմի քանակի, նրանց կրթության և մասնագիտության վերաբերյալ,
   6) էթիկայի կանոնագիր,
   7) էթիկայի կանոնագրի դրույթների ապահովման ինքնակարգավորման միջոցները,
   8) մրցույթին մասնակցելու համար 900005164588 հաշվեհամարին «Պետական տուրքի մասին» օրենքով սահմանված 150 000 ՀՀ դրամ պետական տուրքի վճարումը հավաստող անդորրագիրը:
4. Հայտին կից փաստաթղթերը ներկայացվում են երեք նույնական փաթեթով՝ յուրաքանչյուրը թելակարված, համարակալված, վերջին թերթի հետնամասում, կարի վրա փակցված պիտակով՝ «Բաղկացած է ... թերթից» գրառմամբ («...» նշվում է թերթերի քանակը), ստորագրված և կնքված (կնիքի առկայության դեպքում): Փաթեթները ներկայացվում են փակ ծրարով՝ ստորագրված և կնքված (կնիքի առկայության դեպքում):
5. Հայտերն ընդունվում են 2026 թվականի նոյեմբերի 9-ից մինչև նոյեմբերի 30-ը ներառյալ, յուրաքանչյուր աշխատանքային օր, ժամը 9:00-18:00-ը: Հայտերը և կից փաստաթղթերն անհրաժեշտ է ներկայացնել Հեռուստատեսության և ռադիոյի հանձնաժողով՝ ՀՀ, ք. Երևան, Իսահակյան 28 հասցեով:
6. Լրացուցիչ տեղեկություններ ստանալու համար զանգահարել 010 52 94 06 հեռախոսահամարով կամ գրել licensing@tvradio.am էլ. փոստի հասցեով:

Հեռուստատեսության և ռադիոյի
հանձնաժողովի նախագահ

_____ին
(անուն, ազգանուն)

ՀԱՅՏ

Լսողական ծրագրի հաճախականության օգտագործման լիցենզավորման մրցույթին մասնակցելու

Հայտատուի անվանումը _____

Գրանցվելու/հաշվառման վայրը _____

Պետական գրանցման / հաշվառման համարը _____

Հեռախոսահամարը, էլ. փոստի հասցեն _____

Սփռման տարածքը _____

Տեղեկություն հեղինակազորման վերաբերյալ _____

☐ *Ծանոթացել եմ «Տեսալսողական մեդիայի մասին» օրենքի 15-րդ հոդվածի պահանջներին:*

Կից փաստաթղթեր՝ _____ *թերթ:*

Հայտատու _____ _____
(անուն, ազգանուն) *(սփորագրություն)*

Կ.Տ. (կնիքի առկայության դեպքում)

___ _____ _____
(օրը, ամիսը, տարեթիվը)